


վերջինները, մարմարակերպ արուեստագործուած են, սիւնները գորշ և մնացեալը սպիտակ գոյնով։ Սիւներուն խոյակները կ'ներկայացնեն չորս Աւետարանիչներու խորհրդապատկերներու խմբումը. ամպհովանիին չորս անկիւնները գրեւորուած են վեցթեւան սերովբէի մէկ մէկ գլուխներ. մնացեալը, խաչկալին ամբողջ սարուածքը, մինչեւ ծայրի ոսկեշող խաչը, կ'կրէ քանդակազարդերու հոծ յեւուածք մը, որ յետոյ պիտի ոսկեկիտուի ամբողջովին, երբ շէնքին թացութիւնը իսպառ փարատի։



(թիւ 41) Եկեղեցւոյ նեւքին արեւմտակողմը

Խորանին բոլորքը, այսինքն կողակի (*abside*) որմատակը, բեմէն երեք մէթր վեր մինչեւ Առաքելոց պատկերներուն ներքեւի գեղաքանդակ քիււր, պատուած է արեւելեան դեղնադոյն մարմարիւնով, և, Անիի Մայր Եկեղեցիին նման, ունի տասնեւմէկ բաւուցներ (*niche*), որոնց երկու ծայրիւններն ձեւացուած են աշակողմի և ձախակողմի երկու սլորբանոցները։ Դէպի բեմ հանող երկու փոքր սանդուղներու կշտին, իրարու դէմ դիմաց, կան երկու փոքրիկ դուռներ որոնցմէ կ'մանուի երկու կողմէ պահարանները, որոնք, ճարտարապետական համաչափութեան սկզբունքը խստիւ կիրար-